ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների
արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ- ան նախագահ՝
Հասմիկ Լենոյի Ջհանգիրյանից

ք.Երևան, Վ.Սարգսյան 26/3, 602, 603 գրասենյակ
+37410 52-04-00, profagro@mail.ru

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ ՀՀ **ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստկցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը** ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության և վկայականի պատճենները
2. ՃՀՄ նախագահ՝ Հ.Լ.Ջհանգիրյանի անձնագրի պատճենը
3. Տեղեկանք Ճյուղային հանրապետական միության վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ
4. Հետաքրքրվածության նամակ
5. Հակիրճ վերլուծություն ՀՀ ԳՆ վերջին 3 տարիների ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ

Դիմող՝ ՃՀՄ նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյան

02564755
ՍԱՌՈՒՅՑ
СОЮЗ
UNION

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016 թ.
Մուտք N 2/5121-16

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ծավալած վերջին 2 տարիների գործունեության մասին

Ագրոարհմիությունը իր ներկայիս անվանմամբ գործում է 1991թ.-ից:

Վերջին 2 տարիների ընթացքում, համագործակցելով ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ (IUF, միջազգային կազմակերպություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ֆրիդրիխ Էբերտի Հիմնադրամ և այլն) ակտիվ աշխատանքներ է կատարել ինչպես արհմիության անդամների հետ, այնպես էլ նոր անդամներ ներգրավելու ուղղությամբ:

1. Անցկացվել է 3 ամսյա ծրագիր ԱՄԿ-ի աջակցությամբ, որի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտի աշխատողների և ինքնազբաղվածների հետ 3 մարզի ավելի քան 13 գյուղերում անցկացվել են մասնագետի խորհրդատվություններ և պրակտիկ դասընթացներ ՝Աշխատանքի անվտանգությունը և հիգիենան գյուղատնտեսության ոլորտում՞ թեմայով:
   Մասնակիցներին բաժանվել են առաջին անհրաժեշտության անվտանգության պարագաներ, միջոցներ՝ ձեռնոցներ և արևապաշտպան գլխարկներ:
   Բոլոր անդամ կազմակերպություններին և գործընկերներին, նույն ծրագրի շրջանակներում թարգմանվել, տպագրվել և բաժանվել են ՝Աշխատանքի անվտանգությունն ու հիգիենան ագրոքիմիկատներ օգտագործելիս՞ ձեռնարկը:
2. IUF միջազգային կազմակերպության հետ համատեղ իրականացվել է ՝Արհմիութենական ագիտացիոն ակցիա մարզերում՞ և ՝Ոլորտի զարգացումը և արհմիությունը ՞ ծրագրերը, որոնց շրջանակներում ստեղծվել և անդամագրվել են Ագրորահմիությանը 3 արհեստակցական կազմակերպություններ և 1 մարզային միություն:
3. Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի հետ համատեղ տպագրվել են արհմիութենական այբուբեն, արդյունավետ բանակացություններ և գյուղատնտեսության ոլորտի աշխատողների առանձնահատկությունները ձեռնարկները, անցկացվել են Ռազմավարական պլանավորում,

4.Առաջնորդություն, Արդյունավետ բանակացություններ և կոլեկտիվ պայմանագրեր(գործատուների և աշխատողների համատեղ մասնակցությամբ) արտագնա սեմինարները, որոնց արդյունքում՝

- Ձևավորվել է ՃՀՄ երիտասարդական խորհուրդ , որը մշակում է ՃՀ միության երիտասարդների հետ տարվող աշխատանքների ռազմավարական ծրագիր
- Երեք կազմակերպություններում կնքվել են աշխատողների աշխատանքային պայմանները բարելավող կոլեկտիվ պայմանագրեր
- Իրազեկվել են իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության վերաբերյալ մոտ 450 ոլորտի աշխատակիցներ, այդ թվում գյուղատնտեսության նախարարության տարբեր ստորաբաժանումներից:

Ագրորիմիության ներկայիս աշխատանքի հիմնական ուղղություններն են՝ ստեղծել նախադրյալներ ԱՄԿ 184 կոնվենցիայի՝ ՝Աշխատանքի անվտանգությունը և հիգիենան գյուղատնտեսության ոլորտում՝ վավերացման, ինչպես նաև ոլորտի զբաղվածներին աշխատողի կարգավիճակ տվող օրենքի ընդունման ուղությամբ:

ՃՀՄ նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյան

Հետաքրքրվածության նամակ

ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկելու համար

ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստկցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը (Ագրոարհմիությունը) շուրջ 3 տարի հանդիսացել է ՀՀ ԳՆ կոլեգիայի անդամ: Նման համագործակցությունը շատ արդյունավետ է, քանի-որ Նախարարությունը և Ագրոարհմիությունը սոցիալական գործընկերներ են և կոլեկտիվ համձայնագրի կողմեր: Գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ցանկացած ծրագիր ուղղակի կամ անուղղակի նպաստում է և պետք է նպաստի ոլորտի աշխատողների սոցիալական իրավիճակի բարելավմանը: Ուստի Արգրոարհմիությունը, հիմնվելով նախորդ տարիների համագործակցության դրական փորձի վրա, ինչպես նաև համարելով գրեթե անհնարին զբաղվել ոլորտի աշխատողների աշխատանքային և դրանցից բխող սոցիալ – տնտեսական շահերի ներկայացմամբ, պաշտպանությամբ առանց գործընկերության և հասարակական խորհրդում ընդգրկված լինելու, նպատակահարմար ենք գտնում և հետաքրքված ենք ընդգրկվելու ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

ՃՀՄ ներկայացուցչի խորհրդի կազմում ընդգրկված լինելը խորհրդի որոշումների կայացմանը անմիջական մասնակցությունը լրացուցիչ ընդլայնում է արհմիության հնարավորությունները իր գործունեությունը ավելի արդյունավետ իրականացնելու համար, և ոլորտի աշխատողների խնդիրները լսելի դարձնելու գործում:

ՃՀՄ նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյան

ՀՀ ԳՆ վերջին երեք տարիների կատարած աշխատանքների հակիրճ վերլուծություն

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտն ավանդաբար հանդիսացել է երկրի տնտեսության առաջատար ճյուղերից մեկը: Վերջին տարիներին ոլորտում իրականացվող տնտեսական բարեփոխումների արդյունավետության բարձրացման, շուկայական տնտեսության իրավահարաբերությունների արմատավորման, տնտեսվարողների համար բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորման, սոցիալական գործընկերության ամրապնդման ուղղությամբ տարվող աշխատանքները շատ արդյունավետ են և ծառայում են իրենց նպատակին:

ՀՀ ԳՆ-ի կողմից վերջին տարիներին հետևողականորեն իրականացվող՝

- Ագրոպարենային համակարգի գործունեության բարելավման,
- Գյուղական աղքատության հաղթահարման,
- Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ
- Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բույսերի կարանտինի և պաշտպանության,
- Գյուղական տարածաշրջաններում գործարարության խթանումը, բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված միջոցառումներ
- Ագրարային հատվածի միջազգային տնտեսական ներգրավումը և այլ ծրագրեր, նպաստում են ոլորտի աշխատողների սոցիալ տնտեսական իրավիճակի բարելավմանը, արտագաղթի կանխարգելմանը, իրազեկվածության բարձրացմանը:

Դրական ենք գնահատում կոոպերացիաների ստեղծման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքները, որը օգնում է փոքր գյուղացիական տնտեսություններում առկա բազմաթիվ խնդիրների կոլեկտիվ գործողությունների միջոցով հաղթահարմանը, ինչպես նաև ոլորտում ճկուն վարկային համակարգի կիրառումը՝ գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորումը:

Որպես արհմիություն կարևորում ենք ոլորտում դեռևս առկա հետևյալ խնդիրների լուծումը՝

1. Աշխատողներին (ինքնազբաղվածներին) օրենքով կարգավիճակ տալու ուղղությամբ աշխատանքներ, ինչը կնպաստի կենսաթոշակային և այլ սոցիալական երաշխիքների ապահովմանը:
2. Ապահովագրական համակարգի ներդրում:
3. Աշխատանքի անվտանգության և հիգիենայի ապահովում, համապատասխան ԱՄԿ կոնվենցիաների և ներքին օրենքների ընդունման, իրազեկման և պաշտպանության մեխանիզմների կիրառմամբ:

ՃՀՄ նախագահ՝ Հասմիկ Ջհանգիրյան

Տպագրված է 3 օրինակից

Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
ագրոարդյունաբերական համակարգի
աշխատողների արհեստակցական
կազմակերպությունների ճյուղային
հանրապետական միության 3-րդ
համաժողովի 2012թ. Մարտի 24-ի
որոշմամբ
Միության նախագահ
Հասմիկ Ջհանգիրյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«01» 10. 2002թ.
գրանցման թիվ 211.150.01268
վկայական 03Ա056351
հարկ վճարողի հաշվառման համարը՝
02564755
21.11.2007թ. գրանցված կանոնադրության
թիվ 003-2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«21» 02 2012թ.
Պետական ռեգիստրի ղեկավար՝
Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության

(Նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ - 2012

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը (այսուհետև՝ ճյուղային հանրապետական միություն կամ ՃՀՄ), իրավաբանական անձանց միություն է, որը միավորում է ա•րոարդյունաբերական ճյուղի գյուղատնտեսության և հարակից ոլորտների արտադրական և հասարակական սպասարկման կազմակերպությունների, քաղաքապետարանների, գյուղապետարանների, գյուղացիական տնտեսությունների և/կամ միությունների արհմիութենական աշխատանքների համակարգման հանրապետական օրենսդիր և գործադիր մարմինների կամ իր անդամների սոցիալ-տնտեսական շահերի և իրավունքների ներկայացումն ու պաշտպանության համար:

1.2 Ճյուղային հանրապետական միությունն անկախ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, քաղաքական, հասարակական և այլ կազմակերպություններից և իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, Արհեստակցական միությունների մասին՝ ՀՀ օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

1.3 Ճյուղային հանրապետական միության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ.Սարգսյան 26/3 , 6-րդ հարկ, 602, 603 սենյակ,հեռախոս՝52-04-00,52-04-01:

1.4 Ճյուղային հանրապետական միության լրիվ անվանումն է՝ *Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն:*

1.5 Ճյուղային հանրապետական միությունն ինքնուրույն է որոշում իր նպատակները, գործունեության ձևը և մեթոդները, կառուցվածքը, հրավիրում է համաժողովներ և ղեկավար մարմինների նիստեր:

1.6 Ճյուղային հանրապետական միությունը կարող է անդամակցել արհեստակցական կազմակերպությունների, հանրապետական և միջազգային արհմիութենական կազմակերպությունների, և համագործակցել դրանց հետ պայմանագրային հիմունքներով:

1.7 Ճյուղային հանրապետական միությունը հանդիսանում է իրավաբանական անձ և իր գործունեությունը իրականացնում է ընտրովի մարմինների միջոցով, ունի իր հաշվարկային հաշիվը բանկերում (այդ թվում նաև արտարժութային), կնիք և դրոշմակնիք:

1.8 Ճյուղային հանրապետական միությունը կարող է ունենալ դրոշ, պատվոգրեր և հուշանշաններ:

1.9 Ճյուղային հանրապետական միությունը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ԳԼՈՒԽ 2.
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Ճյուղային Հանրապետական միությունը.

- Միավորում, համակարգում է անդամ կազմակերպությունների գործունեությունը նրանցում ընդգրկված աշխատողների սոցիալ-տնտեսական շահերի և իրավունքների պաշտպանության ուղղությամբ,
- Կարող է կնքել պայմանագրեր գյուղատնտեսության նախարարության հետ, գործատուների, գործատուների միությունների հետ,
- Կազմակերպում է անդամ կազմակերպությունների և գործատուների միջև կոլեկտիվ պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը և վերահսկում դրանցով ստանձնած պարտավորությունների կատարումը,
- Կարող է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնել առաջարկություններ ագրոարդյունաբերական ոլորտում ընդգրկվածաշխատավորների շահերի և իրավունքներին առնչվող նորմատիվ ակտերի ընդունման և նրանցում փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ,
- Կարող է մասնակցել կոլեկտիվ և անհատական աշխատանքային վեճերի լուծմանը, իր անդամներին տրամադրել անվճար իրավաբանական խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրանց շահերի իրավական պաշտպանություն,
- Կարող է ստեղծել և կազմակերպել տեսչական խմբեր, և այլ կազմավորումներ՝ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման ոչ պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով,
- Իրականացնում է տեղեկատվական գործունեություն՝ օգտվելով նաև զանգվածային լրատվական միջոցները իր խնդիրների, նպատակների իրագործման և բացատրման համար,
- Իր անդամներին տալիս է տեղեկատվություն գործող օրենսդրության փոփոխությունների և դրանց հնարավոր հետևանքների մասին,
- Կանոնադրական նպատակների և խնդիրների իրագործման համար կարող է ստեղծել տարբեր ֆոնդեր և իրականացնել ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ գործունեություն,
- Իր անդամների օրինական իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակով կարող է օգտագործել ցանկացած ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձևեր և միջոցներ, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել կոլեկտիվ գործողություններ,
- Նպատակաուղղում է իր միջոցները անդամ կազմակերպությունների անդամների առողջարանային բուժման, հանգստի, մշակութային, մարզական և այլ միջոցառումների կազմակերպմամբ,
- Կազմակերպում է մեթոդական և գործնական օգնություն արհմիութենական ակտիվի ուսուցման և վերապատրաստման համար:

ԳԼՈՒԽ 3

ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆ|Ե|ՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿ|ԵՐՊՉԱ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 *Ճյուղային Հանրապետական միությունը կառուցում, կազմակերպում է իր կառուցվածքը և հարաբերությունները իր կազմում ընդգրկված անդամների հետ ժողովրդավարական սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝*

- Ճյուղային հանրապետական միությանը կամավոր անդամակցելու, բոլոր անդամների հավասարության և անդամակցությունից ազատ դուրս գալու,
- Սույն կանոնադրության շրջանակներում՝ անդամների ինքնուրույնության, ճյուղային հանրապետական միության նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործունեության միակարծիքության և միասնության,
- Ճյուղայի հանրապետական միության մարմինների ընտրությունը ներքևից վարև, ընտրովի մարմինների՝ իր անդամներին հաշվետու լինելու,
- Ճյուղային հանրապետական միության գործունեության հրապարակայնության,
- Բազմակարծության, բանավեճերի ազատությանը խնդիրների քննարկմանև որոշումների ընդունումից հետո գործողությունների միասնության,
- Վերադասի կայացրած որոշումների պարտադիր և անվերապահ կատարման հիման վրա:

ԳԼՈՒԽ 4

ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Ճյուղային հանրապետական միությանը անդամակցելը կամավոր է, անդամ կարող է լինել ագրոարդյունաբերական ճյուղի արտադրական և գյուղատնտեսության սպասարկող կազմակերպությունների և հարակից ոլորտների յուրաքանչյուր արհեստակցական կազմակերպություն /միություն/, որն ընդունում է սույն Կանոնադրությունը և նրա պահանջներին համապատասխան իրականացնում է իր գործունեությունը:

4.2 Ճյուղային Հանրապետական միությանը անդամակցելու և նրանից դուրս գալու համար հիմք է հանդիսանում արհեստակցական կազմակերպության /միության/ համապատասխան դիմումը, որի կապակցությամբ որոշում է ընդունվում նախագահության կողմից 5-օրյա ժամկետում:

4.3 *Ճյուղային հանրապետական միության անդամ կազմակերպությունը /միությունը/ իրավունք ունի՝*

- Պատվիրակել իր ներկայացուցիչներին հանրապետական խորհրդի նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի կազմերում,
- Ներկայանել առաջարկություններ հանրապետական խորհրդի և նախագահության քննարկմանը,
- Մասնակցել ճյուղային հանրապետական միության գործունեության ծրագրերին,

- Ճյուղային հանրապետական միությունից ստանալ անվճար իրավաբանական խորհրդատվություն,
- Ստանալ տեղեկատվություն ճյուղային հանրապետական միության, ղեկավար մարմինների աշխատանքների մասին:

4.4 *Ճյուղային Հանրապետական միության անդամ կազմակերպությունը պարտավոր է՝*

- Իրականացնել իր գործունեությունը սույն կանոնադրության պահանջներին և ճյուղային հանրապետական միության ղեկավար մարմինների որոշումներին համապատասխան,
- Նպաստել սույն կանոնադրությամբ հաստատված նպատակների և խնդիրների իրականացմանը, ճյուղային հանրապետական միության հեղինակության բարձրացմանը,
- Սահմանված ժամկետում ճյուղային հանրապետական միությանը մուծել մուտքավճար՝ 100 ՀՀ դրամ և անդամավճար մուտքագրված անդամավճարների՝ իր ղեկավար մարմնի կողմից հաստատված տոկոսադրույքով, ՃՀՄ-ի հետ կնքված գրավոր համաձայնագրի հիման վրա, սակայն ոչ պակաս երեսուն տոկոսի չափով, եթե այլ բան սահմանված չէ համաձայնագրով:
- Ճյուղային հանրապետական միությանը ներկայացնել ֆինանսատնտեսական հաշվետվություն ղեկավար մարմնի կողմից սահմանված կարգով:

4.5 Սույն կանոնադրության պահանջները խախտելու, այդ թվում՝ անդամավճարները չմուծելու դեպքում ճյուղային հանրապետական միության անդամ կազմակերպությունը /միությունը/ եռամսյա ժամկետում կարող է հեռացվել ճյուղային հանրապետական միության կազմից:

ԳԼՈՒԽ 5
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1 Ճյուղային հանրապետական միության բարձրագույն մարմինը համաժողովն է, որը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ հանրապետական խորհրդի կողմից, համարվում է իրավազոր անդամ կազմակերպությունների կեսից ավելիի պատվիրակների ընդհանուր թվի երկու երրորդի մասնակցության դեպքում:

5.2 *Համաժողովը՝*

- Հաստատում է ճյուղային հանրապետական միության կանոնադրությունը, նրանում կատարված փոփոխությունները, կառուցվածքը, հինգ տարի ժամկետով ընտրում է հանրապետական խորհուրդ, նախագահություն, նախագահ, փոխնախագահ, վերստուգիչ հանձնաժողով իսկ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ազատում է նախագահին իր պաշտոնից,
- Լսում է հանրապետական խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքի մասին,
- Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով որոշում է ընդունում ճյուղային հանրապետական միության վերակազմակերպման և լուծարման մասին,

- Ճյուղային հանրապետական միության նախագահի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Աշխատանքային պայմանագիրը վավերացնում է համաժողովի կողմից լիազորված անդամը:

5.3 Հանրապետական խորհրդի, նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի կազմերումչեն կարող լինել գործատուները և գլխավոր հաշվապահները::

5.4 *Ճյուղային հանրապետական միության հանրապետական խորհուրդը*

- Հրավիրվում է ոչ ուշ, քան տարին մեկ անգամ,
- Հրավիրում է ճյուղային հանրապետական միության համաժողով՝ այդ մասին անցկացումից մեկ ամիս առաջ հայտնելով ներկայացուցչական նորման, օրակարգը և ժամկետը,
- Ստուգում է նոր անդամ կազմակերպությունների կանոնադրությունները, դրանց համապատասխանությունը ճյուղային հանրապետական միության Կանոնադրությանը,
- Սույն Կանոնադրության հիման վրա հաստատում է վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգը,
- Ընտրում է մանդատային հանձնաժողով, հաստատում է ճյուղային հանրապետական միության բյուջե, լսում է վերստուգիչ հանձնաժողովի հաղորդումները, իր իրավասությունների շրջանակներում ընդունում է որոշումներ ճյուղային հանրապետական միության նախագահության գործունեության հետ կապված այլ հարցերով:

5.5 *Ճյուղային հանրապետական միության նախագահությունը.*

- Կարող է հրավիրել արտահերթ համաժողովի նիստ՝ բացառիկ այն դեպքերում, երբ հայտնի են նախագահին անվստահություն հայտնելու փաստեր:
- Հրավիրվում է ոչ պակաս քան մեկ տարին չորս անգամ,
- Ղեկավարում է ճյուղային հանրապետական միության գործունեությունը հանրապետական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում,
- Կազմակերպում է ճյուղային հանրապետական միության որոշումների կատարումը, համակարգում է անդամ կազմակերպությունների /միությունների/ աշխատանքը,
- Անդամ կամակերպություններին /միություններին/, նախագահության անդամներին տալիս է լիազորություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ճյուղային հանրապետական միության շահերը ներկայացնելու կապակցությամբ,
- Որոշում է ընունում՝ արհեստակցական կազմակերպություններում, հանրապետական և միջազգային արհմիութենական կազմակերպություններում պատվիրակներ ուղարկելու կապակցությամբ,
- Որոշում է ընդունում ճյուղային հանրապետական միության առանձին ստորաբաժանումներ, հիմնարկներ և տնտեսական ընկերություններ ստեղծելու, նրանց կանոնադրությունները հաստատելու, վերակազմակերպելու և լուծարելու մասին,
- Մշակում և ճյուղային հանրապետական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ճյուղային հանրապետական միության բյուջեն,
- Անհրաժեշտության դեպքում, ճյուղային հանրապետական միության նախագահի առաջարկությամբ՝ որոշում է ընդունում ճյուղային հանրապետական միության փոխնախագահ ընտրելու մասին,

- Հաստատում է նախագահի կողմից ներկայացված պայմանագրերի ձևերը և տեքստերը,
- Որոշում է ընդունում գույքի օգտագործման պայմանագրեր կնքելու մասին,
- Հաստատում է աշխատակազմի կառուցվածքը, աշխատակարգը, հաստիքացուցակը և աշխատավարձի չափը,
- Իրականացնում է ճյուղային հանրապետական միության համաժողովի և հանրապետական խորհրդի կողմից տրված լիազորությունները,
- Որոշում է ընդունում ճյուղային հանրապետական միության գույքի ձեռքբերման, օտարման և դուրս գրման վերաբերյալ:

5.6 Նախագահության նիստն իրավասու է նրա անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում և որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7 Նախագահին անվստահություն հայտնելու մասին համաժողովի արտահերթ նիստի օրակարգում, նախագահությունը ներկայացնում է ապացույցներ առ այն, որ՝

1. Նախագահը կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ուղղակի կոպիտ ձևով խախտել են ՀՀ օրենսդրությունը
2. Կատարել է այնպիսի գործողություններ, որոնք բացահայտ, ուղղակի չեն բխել ՃՀՄ շահերից:

Միայն վերը նշված 2 պայմանը համաժողովին հիմք է՝ քվորումը ապահովող ձայների 2/3-ի կողմ քվեարկությամբ նախագահին ազատելու իր պաշտոնից:

5.8 *Ճյուղային հանրապետական միության նախագահը՝*

- Նախագահում է հանրապետական խորհրդի և նախահագության նիստերը, ապահովում է դրանց պարբերականությունը,
- Առանց լիազորագրի՝ ճյուղային հանրապետական միության անունից հանդես է գալիս պետական, տեղական ինքնակառավարման, դատական մարմիններում տարբեր կազմակերպություններում կամ տալիս է լիազորագիր դրանցում հանդես գալու համար,
- Իրագործում է համաժողովի, հանրապետական խորհրդի և նախագահության որոշումները,
- Կարող է ազատվել իր պաշտոնից համաժողովի որոշմամբ իրեն անվստահություն հայտնելու դեպքում և սեփական դիմումի հիման վրա, այն նախագահություն ներկայացնելով, անկախ դիմումի պատճառներից:
- Նախագահության հաստատմանն է ներկայացնում կնքվող պայմանագրերի տեքստերի օրինակելի ձևերը,
- Ղեկավարում և ղեկավարում է նախագահության աշխատակազմը, կնքում աշխատանքային պայմանագրեր,
- Տալիս է հրամաններ և հրահանգներ,
- Նախագահության աշխատակազմի աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով որոշում է ընդունում գրասենյակային կամ այլ գույք ձեռք բերելու կապակցությամբ,
- Նախագահության թույլտվությամբ կնքում է գույքի օգտագործման պայմանագրեր,
- Բացում է վարկային հաշիվներ և հանդիսանում դրանց կարգադրիչը,

- Ի պաշտոնե հանդիսանում է համաժողովի պատվիրակ, հանրապետական խորհրդի և նախագահության անդամ:

5.9 *Ճյուղային Հանրապետական Միության Փոխնախագահը ընտրվում է համաժողովի կողմից 5 տարի ժամկետով՝*

- Վերահսկում է նախագահի կողմից տրված կարգադրությունները:
- Նախապատրաստում է նախագահության և խորհրդի նիստերը:
- Ի պաշտոնե ենթակա է նախագահին, հանդիսանում է համաժողովի պատվիրակ, հանրապետական խորհրդի և նախագահության անդամ:
- Նախագահի ժամանակավոր բացակայության ժամանակ՝ իրականացվում է նախագահի կարգադրությամբ սահմանված պարտականությունները:
- Նախագահի պաշտոնից հեռանալու կամ հեռացվելու դեպքում փոխարինում է նրան կանոնադրությամբ ՃՀՄ նախագահին տրված լիազորությունների ծավալով, մինչև սույն կանոնադրության 4.1 կետով նախատեսված հերթական համաժողովի նիստը:

5.10 *Մանդատային հանձնաժողովը*

- Հանդիսանում է ընտրովի մարմին և ընտրվում է հանրապետական խորհրդի նիստում, իր գործունեությունը իրականացնելիս ղեկավարվում է ճյուղային հանրապետական միության Կանոնադրությամբ,
- Իր կազմից ընտրում է Մանդատային հանձնաժողովի նախագահ և նախագահի տեղակալ,
- Ստուգում է հանձնաժողովին մասնակցող պատվիրակների, ճյուղային հանրապետական միության ընտրովի մարմինների լիազորությունները, և տալիս է համապատասխան առաջարկություններ,
- Կարող է իրականացնել անդամ կազմակերպությունների /միությունների/ հիմնադիր փաստաթղթերի ստուգումներ և համապատասխան առաջարկություններ անել դրանց փոփոխությունների վերաբերյալ: Քննարկում է ճյուղային հանրապետական միության տարածքային սկզբնական կազմակերպությունների առաջարկությունները ճյուղային հանրապետական միության ընտրովի մարմինների կազմում ընդգրկված ներկայացուցիչներինփոխելու հետկանչի վերաբերյալ և այն մտցնում է քննարկման հանրապետական խորհուրդ:

5.11 Մանդատային հանձնաժողովի նիստերը հրավիրվում են անհրաժեշտությունից ելնելով և իրավասու են, եթե նրանց աշխատանքներում մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելի և որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

5.12 *Ճյուղային հանրապետական միության վերստուգիչ հանձնաժողովը*

- Վերահսկում է ճյուղային հանրապետական միության, անդամ կազմակերպությունների /միությունների/ ֆինանսատնտեսական գործունեությունը, բյուջեների վերաբերյալ, համաժողովի և հանրապետական խորհրդի որոշումների կատարումը, անդամավճարների հաշվարկումը և մուտքագրումը, ճյուղային հանրապետական միության ֆինանսական միջոցների և գույքի օգտագործումը:
- Հաշվետու է համաժողովին, վերստուգման արդյունքների մասին պարբերաբար տեղեկություններ է ներկայացնում հանրապետական խորհրդին և նախագահությանը:

5.13 Ճյուղային հանրապետական միության վերստուգիչ հանձնաժողովը իր անդամներից ընտրում է հանձնաժողովի նախագահ:

5.14 Ճյուղային հանրապետական միության վերստուգիչ հանձնաժողովի անդամները չեն կարող հանդիսանալ հանրապետական խորհրդի և նախագահության անդամները:

ԳԼՈՒԽ 6

ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6.1 Ճյուղային հանրապետական միությունը օգտագործում, տիրապետում և տնօրինում է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը, այդ թվում՝ դրամական միջոցները, որոնք անհրաժեշտ են Կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, տիրապետում և օգտագործում է իրեն օգտագործման իրավունքով հանձնված գույք:

6.2 Ճյուղային հանրապետական միությունը որպես սեփականություն կարող է ունենալ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գույք:

6.3 Ճյուղային հանրապետական միության դրամականա միջոցները գոյանում են անդամ կազմակերպությունների մուծումներից, գործատուների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից, նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

6.4 Ճյուղային հանրապետական միության գույքը օգտագործվում է հանրապետական միության ղեկավար մարմինների որոշմամբ՝ միայն սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Ճյուղային հանրապետական միության խնդիրների և նպատակների իրագործման համար:

Գլուխ 7

ՃՅՈՒՂՅԱԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Ճյուղային հանրապետական միության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) և լուծարումը իրականացվում է համաժողովի մասնակիցների 2/3 որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

7.2 Ճյուղային հանրապետական միության լուծարման դեպքում համաժողովը ընտրում է լուծարային հանձնաժողով, որը սահմանում է լուծարման և պարտատերերի պահանջների բավարարման ժամկետը և կարգը:

7.3 Պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի և միջոցների՝ սույն Կանոնադրության նպատակներին համապատասխան օգտագործման անհնարինության դեպքում, դրանք փոխանցվում են պետական բյուջե:

Կազմված է 24.03.2012թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՎԿԱՅԱԿԱՆ

03 Ա 056351

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
(անվանումը)
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է պետական ռեգիստրի ՎԱՐՉՈՒԹՅԱՆ կողմից
(ստորաբաժանման անվանումը)

Գրանցման համարը 211.150.01268

Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը 01.10.2002թ.

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) 39053969

Իրավաբանական անձի տեսակը «Ոչ առևտրային»

Գործունեության ժամկետը մինչև անժամկետ

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ.

«07» հոկտեմբերի 2002 թ.

ՆԵՐԴԻՐ 005

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա056351 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» Իրավաբանական անձանց միություն(ոչ առևտրային) (ԻԱՄ)

Գտնվելու վայրը
Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ ՀԱՍՄԻԿ ԶՀԱՆԳԻՐՅԱՆ ԼԵՆՈՅԻ
նույնականացման քարտ 000025247, տրվ. 2012-10-09, 001 կողմից,
հասցե ՊԱՐՈՆՅԱՆ Փ. / Շ / 4Ա / ԲՆ. 21 ԿԵՆՏՐՈՆ 0015 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Այլ տեղեկություններ Նախագահի անձնագրային տվյալների փոփոխության գրանցում:
Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2016-04-11-ին

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ.

«11» 04 2016 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

ԸՆԴՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՃՌԱ ԸՆԿՈՂՈՒԹՅՈՒՆՈՎ

ԸՆԿՈՒՆԿԻ

ԺՏՌՎԵՑԻ ԸՆԿՈՏՅԱՆ

ԸՀՍՔԺՀՍՏՅԱՆՈՎԸՆՏ ՎԱՌՏՈՒՆՔՆՏ